

ԱՋԴԱՐԱՐՄԱՆ ՁԵՐ ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ





ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՁԵՐ ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ



Սույն ձեռնարկը պատրաստվել է «ԱզդարարիՐ, Հայաստան» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը «Հայաստան Բարեվարքություն» Ծրագրի շրջանակներում՝ Ամերիկայի Ժողովրդի առաջաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:

Ձեռնարկի բովանդակության պատասխանատուն «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն է և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

Ձեռնարկը պատրաստվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող ազդարարման համակարգի համապետական իրազեկման արշավի շրջանակում:

Ձեռնարկը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

ՆԱԽԱԲԱՆ

Ազդարարումը կարևոր գործիք է կոռուպցիոն բնույթի դեպքերի, շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների, հանրային շահերին ուղղված այլ վնասները բացահայտելու, կոռուպցիան նվազեցնելու և հաղթահարելու, կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունք ձևավորելու համար: Այնուամենայնիվ, ոչ իրավաչափ վարքագծի մասին հաղորդելու գործընթացը կարող է լինել անհանգստացնող, եթե այն ներկայացվի անհատական տվյալներ ներկայացնելու եղանակով, սակայն ազդարարը այն կարող է ներկայացնել նաև անանուն եղանակով երբ անանունության պահպանումն էական է: Այս ձեռնարկում ներկայացվում է ուղեցույց այն մասին, թե ինչպես ապահովել գաղտնի, անանուն հաղորդման ներկայացումը՝ միաժամանակ մատնանշելով հաղորդման արդյունավետ քննության համար անհրաժեշտ և բավարար պայմանները:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ի՞նչ է ազդարարումը:

Ազդարարումը՝ ազդարարի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հաղորդում է օրենքով նախատեսված իրավասու անձին կամ մարմին:

Ո՞վ է ազդարարը:

Ազդարարը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը օրենքով նախատեսված կարգով բարեխղճորեն հաղորդում է տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ՝ կապված այն պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ, որոնց հետ նա գտնվում կամ գտնվել է աշխատանքային կամ քաղաքացիաիրավական կամ վարչաիրավական կամ այլ հարաբերությունների մեջ, կամ որին դիմել է ծառայությունների մատուցման նպատակով, կամ որը սխալմամբ ընկալվել է որպես ազդարար:

Ինչու՞ է անհրաժեշտ ազդարարել:

Ազդարարման նպատակներն են՝

1. բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.
2. նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.
3. նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

Ո՞ր մարմինների կամ պաշտոնատար անձանց մասին պետք է լինի հաղորդումը:

Ազդարարման շրջանակներում հաղորդումը պետք է վերաբերի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց գործունեությանը:

Ի՞նչ տեղեկություններ պետք է հայտնի ազդարարը:

Ազդարարը պետք է հայտնի տեղեկություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև կազմակերպություններում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ:



Որո՞նք են կոռուպցիոն բնույթի դեպքերը:

Կոռուպցիոն բնույթի դեպքերն են ՀՀ քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ: Տես սույն ուղեցույցի **Հավելվածը 1-ը**:



Ո՞րն է հանրային շահերին ուղղված այլ վնասը:

Հանրային շահերին ուղղված վնաս՝ հանրային առողջությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնաս, պետության միջոցների կամ գույքի վատնում, ինչպես նաև այլ վնաս, որը պատճառվել է հասարակական կամ պետական կառավարման կարգին:



Ի՞նչ է անանուն հաղորդումը և ի՞նչ ձևով է այն իրականացվում:

Անանուն հաղորդումը ազդարարման տեսակ է, որի դեպքում հնարավոր չէ պարզել ազդարարի ինքնությունը: Ազդարարը անանուն հաղորդումը ներկայացնում է այն azdararir.am միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրելու միջոցով:



Ի՞նչ է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը:

Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը azdararir.am տիրույթում գործող էլեկտրոնային համակարգ է, որի միջոցով ազդարարը կարող է անանուն եղանակով հաղորդել տեղեկություններ կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման մասին:



ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

Հաղորդում azdararir.am
հարթակի միջոցով

Ազդարարն ընտրում է
ազդարարման եղանակը

Տվյալներ ներկայացնելու
եղանակով ազդարարում

Անանուն եղանակով
ազդարարում

Գլխավոր դատախազություն

Վերահասցեագրվում է
Օպերատիվ-հետախուզական
գործունեություն իրականացնող մարմին

Վերահասցեագրվում է Կոռուպցիայի
կանխարգելման հանձնաժողով

Հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդում:
(Հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել)

Հաղորդում շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին

Արդյո՞ք էլեկտրոնային հարթակի միջոցով հնարավոր է
իրականացնել ազդարարում՝ նշելով ազդարարի անունը:

Հարթակը նախատեսված է անանուն ազդարարումը ապահովելու նպատակով:
Այդուհանդերձ հարթակի միջոցով հնարավոր է իրականացնել նաև ազդարարում՝
բացահայտելով ազդարարի անունն ու տվյալները:



Ո՞ր մարմինն է ստանում էլեկտրոնային ազդարարման շրջանակներում ստանում անանուն հաղորդումը:

Միասնական էլեկտրոնային հարթակն ապահովում է հասանելիություն միայն ՀՀ գլխավոր դատախազությանը: Անանուն հաղորդումը ստանում է ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան պաշտոնատար անձը:

Արդյո՞ք անանուն հաղորդման դեպքում հնարավոր է ապահովել ազդարարի և գլխավոր դատախազության կապը: Արդյո՞ք դա վտանգավոր չէ անանունությունը բացահայտելու համար:

Օրենքի համաձայն, միասնական էլեկտրոնային հարթակը օժտված է հետադարձ կապի միջոցով անանուն հաղորդմանն առնչվող անհրաժեշտ տեղեկությունների և փաստերի հավաքման հնարավորությամբ: Յուրաքանչյուր անանուն ազդարարի համար, հաղորդում ներկայացնելու պահին, համակարգն ինքնաշխատ եղանակով գեներացնում է օգտվողի անուն և գաղտնաբառ, որոնց միջոցով՝ անանուն ազդարարը առանց իր ինքնությունը բացահայտելու կարող է մուտք գործել համակարգում իր անձնական տիրույթ, հետևել ներկայացված հաղորդման ընթացքին և հետադարձ կապի միջոցով պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել հաղորդման հետագա ընթացքի համար պատասխանատու անձին:

Եթե հաղորդումը ներկայացնելիս անձը իր ցանկությամբ բացահայտել է իր ինքնությունը, վերջինս մուտք գործելով միասնական էլեկտրոնային հարթակ, կարող է նաև այլ հաղորդումներ ներկայացնել իր անձնական տիրույթից:

Ո՞ր մարմինը և ի՞նչ ձևով է ընթացք տալիս անանուն հաղորդումներին:

Անանուն հաղորդումները ստանում և ընթացք է տալիս ՀՀ գլխավոր դատախազությունը: Դատախազությունը իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

Ինչ պահանջների պետք է համապատասխանի անանուն հաղորդումը, որպեսզի օրենքով սահմանված կարգով ընթացք ստանա:



Հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը ենթակա է ստուգման «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել: Ստացված հաղորդումն ստուգելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունն այն վերահասցեագրում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին:

Ինչ գործողություն է ձեռնարկում Գլխավոր դատախազությունը, եթե ներկայացված հաղորդումը հանցագործության մասին չէ, կամ եթե անանուն հաղորդումը պարունակում է շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին տեղեկություններ:



Եթե հաղորդումը հանցագործության մասին չէ, ապա Գլխավոր դատախազությունը եռօրյա ժամկետում հաղորդումը փաստաթղթային տարբերակով վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:

Շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը Գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ապահովում է իրեն վերահասցեագրված՝ իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

ԱՆԱՆՈՒՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱԶԴԱՐԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության լիազոր մարմնի, երաշխավորում է ազդարարի պաշտպանությունը՝ ապահովելով նրա անանունությունը: Գործնականում ազդարարի իրավունքները պաշտպանված են, քանի որ ապահովված է վերջինիս անանունությունը:

Ազդարարը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով հաղորդում ներկայացնելիս իրավունք ունի.

1. Ներկայացնել անանուն կամ տվյալները բացահայտման եղանակով հաղորդում azdararir.am հարթակի միջոցով:
2. Ստանալ պաշտպանություն՝ ազանունությունը ապահովելու միջոցով:
3. Ստանալ ազդարարին բնորոշ պաշտպանություն, եթե հաղորդումը ներկայացվել է իր մասին տվյալները բացահայտելու միջոցով:
4. Միասնական հարթակի միջոցով հաղորդակցվել գլխավոր դատախազության հետ:

Ազդարարման գործնական ուղեցույց

Քայլ
1

Անանուն ազդարարման համար անհրաժեշտ է համակարգչի միջոցով մուտք գործել Ազդարարման միասնական azdararir.am հարթակ:

Քայլ
2

Նախքան ձեր հաղորդումը գրելը, անհրաժեշտ է ծանոթանալ ազդարարման քաղաքականությանն ու ընթացակարգերին: Սա կօգնի ձեզ հասկանալ արդյոք ձեր կողմից ներկայացվող հաղորդումը համապատասխանում է ազդարարման նպատակներին, թե ոչ: «Հարթակի մասին» բաժնում կարող եք տեղեկանալ ազդարարման նպատակների, ազդարարման ոլորտում գործող օրենսդրության պահանջներին: «Հարթակի օգտագործման ուղեցույց» բաժնում հանրամատչելի ձևով ներկայացված է ազդարարման ուղեցույցը:

Քայլ
3

Որոշեք, արդյոք ազդարարում եք անանուն, թե տվյալները ներկայացնելու եղանակով: Եթե պատրաստ եք ազդարարել Ձեր տվյալները ներկայացնելու միջոցով, ընտրեք տվյալները ներկայացնելու եղանակով ազդարարումը: Եթե մտավախություններ ունեք բացահայտ ազդարարելու վերաբերյալ, ազդարարեք անանուն:

Եթե ընտրել եք անանուն ազդարարման եղանակը, առաջարկվում է նախապես թաքցնել Ձեր սարքի (համակարգիչ, պլանշետ, հեռախոս) համացանցային հաղորդակցության հասցեն (IP):

Ձեր IP հասցեն թաքցնելու մի քանի եղանակներ կան, որոնցից ամենատարածվածներն են՝

- **VPN (Virtual Private Network) օգտագործելը:** VPN-ները անվտանգ կապ են ստեղծում ձեր սարքի և ինտերնետի միջև՝ թաքցնելով ձեր իրական IP հասցեն և փոխարինելով այն VPN սերվերի IP հասցեով:
- **Tor Browser օգտագործելը:** Tor-ը անանուն բրաուզեր է, որն օգտագործում է մի շարք միջնորդ սերվերներ՝ ձեր կապը գաղտնագրելով և ձեր IP հասցեն թաքցնելով:
- **Հանրային Wi-Fi ցանցեր օգտագործելը:** Հանրային Wi-Fi ցանցերի միջոցով ինտերնետին միանալիս ձեր անձնական IP հասցեն փոխարինվում է այդ ցանցի IP հասցեով: (չի ապահովում լիակատար անանունություն)

Որպեսզի ավելի արդյունավետ եղանակով գործի անանունությունը անհրաժեշտ է գործիքներից օգտվել միաժամանակ:

1. Համակարգչի դեպքում (Window/Linux օպերացիոն համակարգ)

- Ներբեռնեք Tor Browser դիտարկիչը <https://www.torproject.org> կայքից, տեղադրեք և գործարկեք այն:
- Ներբեռնեք Opera դիտարկիչը <https://www.opera.com> կայքից:
- Դիտարկչի մեջ նշեք ակտիվացնել VPN-ը (Enable VPN):

2. Բջջային հեռախոս (iOS)

- Ներբեռնեք Onion browser դիտարկիչը App Store-ից, տեղադրեք և գործարկեք այն: Onion browser դիտարկիչը կարելի է օգտագործել դրա մեկնարկից անմիջապես հետո: Սարքի համացանցային հաղորդակարգի հասցեն (IP address) կթաքցվի՝ առանց որևէ լրացուցիչ կարգավորումների:

3. Բջջային հեռախոս (Android)

- Ներբեռնեք Tor Browser for Android դիտարկիչը Google Play-ից, տեղադրեք և գործարկեք այն:
- Ամեն անգամ Tor Browser for Android դիտարկիչը գործարկելիս ձեզ հարկավոր կլինի կտտացնել Միանալ (Connect) կոճակը՝ Tor ցանցին միանալու և ձեր սարքի համացանցային հաղորդակարգի հասցեն (IP address) թաքցնելու համար:

Քայլ
5

Սեղմեք «Ազդարարել» կոճակը: Համակարգի առաջադրած ազդարարման երկու տարբերակներից ընտրեք Անանուն եղանակով ազդարարման եղանակը: Համակարգը Ձեզ ևս մեկ անգամ կնախազգուշացնի անանունությունը ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ:

Քայլ
6

Բացված պատուհանում պետք է լրացնել բոլոր անհրաժեշտ տողերը:

1. Նշեք այն մարմինը, որտեղ կամ որի աշխատողի մասնակցությամբ կատարվել է հանցագործություն (կոռուպցիոն դեպք) (օրինակ՝ ՀՀ առողջապահության նախարարություն):
2. Նշեք հանցագործություն (կոռուպցիոն դեպք) կատարած անձի անունը, ազգանունը, պաշտոնը:
3. Եթե առկա է հանցագործությանն (կոռուպցիոն դեպքին) առնչություն ունեցող այլ անձ, նշեք տվյալ անձի անունը, ազգանունը, պաշտոնը:
4. Նշեք հանցագործության (կոռուպցիոն դեպքի) կատարման ամսաթիվը, իսկ եթե դա հայտնի չէ, ապա այն ժամանակագրական միջակայքը, երբ տեղի է ունեցել հանցագործությունը:
5. Ներկայացրեք հանցագործության (կոռուպցիոն դեպքի) նկարագրությունը:
6. Կատարեք փաստաթղթերի կամ աուդիո և տեսաձայնագրությունների վերբեռնում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ՝ ԱՆԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եղեք հակիրճ և շարադրեք պարզ

Ձեր հաղորդումը գրելիս օգտագործեք հստակ և հակիրճ ձևակերպումներ: Խուսափեք օգտագործել խոսակցական կամ անորոշ տերմիններ, որոնք կարող են դժվարացնել ընթերցողի համար խնդիրը հասկանալը: Ներկայացրեք հիմնավոր փաստեր և տրամադրեք իրադարձությունների ճիշտ ժամանակագրությունը:

Կենտրոնացեք փաստերի և ապացույցների վրա

Ձեր հաղորդումը հնարավորինս արժանահավատ դարձնելու համար ներառեք ստուգելի փաստեր և ապացույցներ, որոնք կաջակցեն ձեր պնդումներին: Սա կարող է ներառել փաստաթղթեր, էլ. նամակներ, լուսանկարներ կամ վկաների ցուցմունքներ: Այնուամենայնիվ, համոզվեք, որ դուք ականա չբացահայտեք ձեր ինքնությունը ներկայացված ապացույցների միջոցով: Վերացրեք ցանկացած անձնական տեղեկատվություն կամ մանրամասներ, որոնք

կարող են ձեր ինքնությունը բացահայտել:

Պաշտպանեք ձեր անանունությունը

- Հաղորդումը տալիս ձեռնարկեք հետևյալ նախազգուշական միջոցառումները՝ ձեր անանունությունը պահպանելու համար.
- Խուսափեք օգտագործել անձնական դերանուններ կամ հղումներ, որոնք կարող են նույնականացնել ձեզ:
- Հեռացրեք ցանկացած մետատվյալ էլեկտրոնային ֆայլերից, նախքան դրանք ներկայացնելը:
- Ձեր ձեռքից հարցը քննարկելուց գործընկերների կամ ուրիշների հետ, ովքեր կարող են ակամա բացահայտել ձեր ինքնությունը:
- Տրամադրեք հնարավորինս շատ մանրամասներ՝ առանց ձեր ինքնությունը բացահայտնելու:

Թեև կարևոր է պահպանել ձեր անանունությունը, բավականաչափ մանրամասներ տրամադրելը կարևոր է հետաքննության համար: Ներառեք հետևյալ տեղեկատվությունը.

- Ներգրավված անձանց անունները.
- Միջադեպերի ամսաթվերը, ժամերը և վայրերը:
- Սխալ վարքագծի նկարագրությունը, ներառյալ կոնկրետ գործողությունները, որոշումները կամ հաղորդակցությունները:
- Սխալ վարքագծի ազդեցությունը ներգրավված կազմակերպության կամ անհատների վրա:
- Ցանկացած քայլ, որը դուք ձեռնարկել եք խնդրի լուծման համար, նախքան դրա մասին հաղորդելը:
- Վերանայեք մի քանի անգամ ձեր հաղորդումը:

Քայլ
7

Ձեր անանուն հաղորդումը ներկայացնելուց հետո համակարգը կգրանցի հաղորդումը և Ձեզ կտրամադրի մուտքանուն և գաղտնաբառ, որը կարող էք օգտագործել ՀՀ գլխավոր դատախազության հետ հաղորդակցվելու համար: Այդ մուտքանունով և գաղտնաբառով պարբերաբար մուտք գործեք azdarrarir.am համակարգ, ՀՀ գլխավոր դատախազության լրացուցիչ հարցերին պատասխանելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի հանրապետության քրեական օրենսգրքի

ՑԱՆԿ. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ հանցանքների

Հոդված 221.1 Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը

Հոդված 231 Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը

Հոդված 232 Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը

Հոդված 255 **2-րդ մաս, 2-րդ կետ.** Խարդախությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 256 **2-րդ մաս, 2-րդ կետ.** Վստահված գույքը հափշտակելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 258 **2-րդ մաս, 9-րդ կետ.** Շորթումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 268 **3-րդ մաս, 2-րդ կետ.** Ներքին տեղեկությունների անբարեխիղճ օգտագործումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 269 **3-րդ մաս, 3-րդ կետ.** Արժեթղթերի շուկայում գնային չարաշահումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 272

Մասնավոր ոլորտում կաշառք ստանալը

Հոդված 273

Մասնավոր ոլորտում կաշառք տալը

Հոդված 274

Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկի, մրցավարի, թիմի ղեկավարի, մարզչի, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչի, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցի կամ դրա կազմակերպչի կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամի կողմից կաշառք ստանալը

Հոդված 275

Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության մարզիկին, մրցավարին, թիմի ղեկավարին, մարզչին, արհեստավարժ մարզամրցման այլ մասնակցի կամ դրա կազմակերպչին, հանդիսադիր առևտրային մրցույթի մասնակցին կամ դրա կազմակերպչին կամ մրցանակաբաշխային հանձնաժողովի անդամին կաշառք տալը

Հոդված 276

Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալը կամ պահանջելը

Հոդված 277

Մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը

Հոդված 282

2-րդ մաս, 1-ին կետ. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով. **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 284

2-րդ մաս, 2-րդ կետ. Հակամրցակցային գործունեությունը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 296

3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 435

Կաշառք ստանալը

Հոդված 436

Կաշառք տալը

Հոդված 437

Կաշառքի միջնորդությունը

Հոդված 438

Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ

ազդեցությունն օգտագործելը

Հոդված 439

Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով ապօրինի վարձատրություն տալը

Հոդված 440

Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը

Հոդված 441

Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ գեներ կամ հատուկ միջոց օգտագործելով)

Հոդված 442

Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը

Հոդված 443

Ապօրինի հարստանալը

Հոդված 444

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը

Հոդված 445

Պաշտոնեական կեղծիքը

Հոդված 477

Կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան

Հոդված 480

Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը

Հոդված 481

Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը

Հոդված 482

Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը

Հոդված 486

2-րդ մաս, 2-րդ կետ. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, **3-րդ մաս,** եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով

Հոդված 496

Դատավարության մասնակիցներին՝ իրենց լիազորությունների հետ կապված կաշառք տալը

Հոդված 497

Դատավարության մասնակիցների կողմից իրենց լիազորությունների հետ կապված կաշառք ստանալը

Հոդված 549

Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը (բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական դրդումներից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով)

Ցանկ

Ազդարարման վերաբերյալ օգտակար նյութերի

1. [«Ազդարարման մասին» ՀՀ օրենք](#)
2. [ՀՀ կառավարության 12.04.2018թ. N 439-Ն որոշում](#)
3. Իմ հանրային IP հասցեն <https://www.mypersonalip.com/hy/>
4. TOR դիտարկչի ներբեռնում <https://www.torproject.org/>

Երևան, 2024 թ.

